

**Ստանդարտացման ազգային համակարգ
Միջպետական ստանդարտների մշակման և կիրառման կարգը**

Հանգուցային բառեր. միջպետական ստանդարտ, մշակման, քննարկման, գործարկման, կիրառման, գործողության դադարեցման կարգ

Նախաբան

- 1 ՄՇԱԿՎԵԼ է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից
- 2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ է ԴՐՎԵԼ Հայպետստանդարտի կողմից:
Հրաման հմ. 39-Վ առ 2002-07-19
- 3 ԳՐԱՆՑՎԵԼ է Հայաստանի Հանրապետության ստանդարտների պետական գրանցամատյանում, հմ. 365-2002 առ 2002-07-22
- 4 Սույն ստանդարտում իրացված են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները և ստանդարտացման միջպետական համակարգի ստանդարտների պահանջները
- 5 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Սույն սաանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց Հայպետստանդարտի թույլտվության

Բովանդակություն

1 Կիրառման ոլորտը	1
2 Նորմատիվ վկայակոչումներ	2
3	
Սահմանումներ.....
3 Ընդհանուր դրույթներ.....
4 Միջպետական ստանդարտների նախագծերի մշակման կարգը ՄՏՀ-երի կողմից, որոնց քարտուղարությունների վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա և նախագծերի մշակումը Հայաստանի Հանրապետությունում ՄՏՀ-երի շրջանակներից դուրս.....	2
5 Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտների նախագծերի քննարկման կարգը, որոնց մշակողները համաձայնագրին մասնակից այլ պետություններ են կամ ՄՏՀ-եր, որոնց քարտուղարությունների վարումը դրված է այդ պետությունների վրա.....	6
6 Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտների կիրառման կարգը.....	7
7 Միջպետական ստանդարտների փոփոխությունների նախագծերի մշակման և ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց կիրառման կարգը.....	10
8 Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտների գործողության դադարեցման կարգը.....	12
Հավելված Մ Մատենագիտություն	14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆԴԱՐՏ

Ստանդարտացման ազգային համակարգ
Միջպետական ստանդարտների մշակման և կիրառման կարգը

Национальная система стандартизации
Порядок разработки и применения межгосударственных
стандартов

National system for standardization
Procedure development and application of interstate standards

Գործարկման թվականը 2002-08-01

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են.

- միջպետական ստանդարտների նախագծերի մշակման կարգը, որոնց մշակողը Հայաստանի Հանրապետությունն է կամ ստանդարտացման միջպետական տեխնիկական հանձնաժողովները (ՄՏՀ), որոնց քարտուղարությունների վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա*,

- ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման մասին համաձայնագրին մասնակից այլ պետությունների (այսուհետև համաձայնագրին մասնակից պետություններ) կամ ՄՏՀ-երի կողմից, որոնց քարտուղարությունների վարումը դրված է այդ պետությունների վրա, մշակված միջպետական ստանդարտների նախագծերի քննարկման կարգը Հայաստանի Հանրապետությունում,

- ընդունված միջպետական ստանդարտների կիրառման կարգը Հայաստանի Հանրապետությունում,

- գործող միջպետական ստանդարտներում փոփոխության կատարման կարգը,

- Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտների

գործողության դադարեցման կարգը:

Սույն ստանդարտի դրույթներով ղեկավարվում են ՄՏՀ-երի քարտուղարությունները, որոնց վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա, Հայաստանի Հանրապետության ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ), պետական մարմինները, իրավաբանական անձինք, գիտատեխնիկական, ինժեներական և այլ հասարակական կազմակերպությունները:

* Այստեղն այսուհետև ՄՏՀ-ի կառուցվածքի և գործունեության հետ կապված տերմինները համապատասխան ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի կողմից սահմանված կանոններին [1]

Պաշտոնական հրատարակություն

2 Նորմատիվ վկայակոչումներ
 Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ ստանդարտները.
 ՀԱՍ 1.0-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ
 ՀԱՍ 1.2-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Ազգային ստանդարտների մշակումը
 ՀԱՍ 52-97 Ստանդարտացում և գործունեության հարակից տեսակներ. Տերմիններ և սահմանումներ
 ՊՕՍ 1.0-92 Ստանդարտացման միջպետական համակարգ. Հիմնական դրույթներ
 ՊՕՍ 1.2-97 Ստանդարտացման միջպետական համակարգ. Միջպետական ստանդարտներ, միջպետական ստանդարտացման կանոններ և հանձնարարականներ. Մշակման, ընդունման, նորացման և չեղյալ հայտարարման կարգ
 ՊՕՍ 1.5-2001 Ստանդարտացման միջպետական համակարգ. Միջպետական ստանդարտներ, միջպետական ստանդարտացման կանոններ և հանձնարարականներ. Կառուցման, շարադրման, ձևավորման, բովանդակության և նշագրման ընդհանուր պահանջներ:

3 Սահմանումներ
 Սույն ստանդարտում կիրառվում են տերմիններ համապատասխան սահմանումներով ըստ ՀԱՍ 52 ստանդարտի:

4 Ընդհանուր դրույթներ
 4.1 Միջպետական ստանդարտները մշակելիս հարկավոր է ղեկավարվել ՊՕՍ 1.0, ՊՕՍ 1.2, ՊՕՍ 1.5 ստանդարտներով՝ հաշվի առնելով ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (այսուհետև՝ միջպետական խորհուրդ) կողմից հաստատված կանոններն ու կարգերը [2], [3]:
 4.2 Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառի միջպետական ստանդարտների մշակումը, քննարկումը, ընդունումը, գրանցում փոփոխությունների կատարումը և չեղյալ հայտարարումը իրականացվում է շինարարությունում ստանդարտացման, տեխնիկական նորմավորման և սերտիֆիկացման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովի՝ ՇՄԳՏՀ (ՕժՁԽԻ) կողմից սահմանված կարգով [4]՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5 Միջպետական ստանդարտների նախագծերի մշակման կարգը ՄՏՀ-երի կողմից, որոնց քարտուղարությունների վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա և նախագծերի մշակումը Հայաստանի Հանրապետությունում ՄՏՀ-երի շրջանակներից դուրս

5.1 Միջպետական ստանդարտի մշակման կազմակերպումը
 5.1.1 Միջպետական ստանդարտի (այսուհետև՝ ստանդարտի) մշակմանը նախորդում է ՄՏՀ-ի քարտուղարության, Հայաստանի Հանրապետության ՏՀ-երի, պետական մարմինների, իրավաբանական անձանց, գիտատեխնիկական, ինժեներական և այլ հասարակական կազմակերպությունների կողմից համապատասխան հայտի նախապատրաստումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմին (այսուհետև՝ ստանդարտացման ազգային մարմին)՝ միջպետական ստանդարտացման ծրագրի առաջարկություններ կազմելու համար:

Հայտում նշում են ստանդարտի մշակման անհրաժեշտության հիմնավորումը: Հայտին, որպես ելքային տվյալներ, կարող են կցվել ստանդարտի և (կամ) դրա մշակման

տեխնիկական առաջադրանքի նախագծերը:

5.1.2 Ստանդարտի նախագծի մշակումը կարելի է կազմակերպել նաև նախաձեռնության կարգով (ծրագրից դուրս):

5.2 Ստանդարտի նախագծի առաջին խմբագրության մշակումը

5.2.1 ՄՏՀ-ի քարտուղարությունը վարող կամ մշակող կազմակերպությունը նախապատրաստում է ստանդարտի նախագծի առաջին խմբագրությունը և դրա պարզաբանումը ՀՍՏ 1.2 ե (կամ) ՊՕՍՏ 1.2 ստանդարտներով սահմանված կարգով և ուղարկում է դրանք գնահատման Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կազմակերպություններին կամ առանձին մասնագետներին:

5.2.2 Շահագրգիռ կազմակերպությունները կամ առանձին մասնագետները ստանդարտի նախագիծն ստանալուդ հետո մեկ ամսից ոչ ավելի ժամանակահատվածում քննարկում են այն և կազմում են կարծիքներ ՊՕՍՏ 1.2 ստանդարտին համապատասխան:

5.2.3 ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը քննարկում է ստացված կարծիքները, կազմում է ստանդարտի նախագծի կարծիքների ամփոփագիրը, նախապատրաստում է ստանդարտի նախագծի նոր խմբագրությունն ըստ ՊՕՍՏ 1.2, ՊՕՍՏ 1.5 ստանդարտների և ներկայացնում է ստանդարտացման ազգային մարմին:

ՄՏՀ-ի կողմից ստանդարտի նախագծի մշակման դեպքում, մինչև ստանդարտացման ազգային մարմին ներկայացնելը, ՄՏՀ-ի քարտուղարությունն այն պետք է համաձայնեցնի ՄՏՀ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների հետ:

5.2.4 Ստանդարտացման ազգային մարմինն ստուգում է ստանդարտի նախագծի համապատասխանությունը մշակման պայմանագրի պայմաններին (առկայության դեպքում), ՊՕՍՏ 1.0, ՊՕՍՏ 1.2, ՊՕՍՏ 1.5 ստանդարտների պահանջներին, դրա հետ փոխկապակցված և միջպետական Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների պահանջներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, չափազիտական կանոններին և նորմերին, կիրառված տերմինաբանությանը և ուղարկում է այն (պարզաբանման հետ միասին) ստանդարտի մշակմանը շահագրգիռ համաձայնագրին մասնակից պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին:

Ծանոթություն: Եթե ստանդարտի նախագիծը ՄՏՀ-ի կամ մշակող կազմակերպության կողմից մշակվել է նախաձեռնության կարգով (առանց միջպետական ստանդարտացման ծրագրի մեջ մտցնելու), ապա այն ուղարկվում է համաձայնագրին մասնակից բոլոր պետություններին:

Անհրաժեշտության դեպքում ստանդարտի նախագիծը (առաջին խմբագրությունը) կարող է անմիջականորեն կարծիքի ուղարկվել համաձայնագրին մասնակից պետությունների տարածքում գտնվող շահագրգիռ կազմակերպություններին:

5.2.5 Ստանդարտացման ազգային մարմինը ստացված բոլոր կարծիքներն ուղարկում է ստանդարտի նախագիծը մշակողին վերջին խմբագրությունը նախապատրաստելու համար:

5.3 Ստանդարտի նախագծի վերջին խմբագրության մշակումը և քննարկումը

5.3.1 Ստանդարտի նախագծի վերջին խմբագրության մշակումը, դրա քննարկումը և համաձայնեցումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների համար ՀՍՏ 1.2 ստանդարտով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կազմակերպությունների քննարկմանը ստանդարտի նախագծի վերջին խմբագրության ուղարկման հետ միաժամանակ, ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը այն ուղարկում է ՄՏՀ մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչների քննարկմանը

5.3.2 ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը ընդհանրացնում է ստանդարտի նախագծի վերջին խմբագրության քննարկման արդյունքները:

Եթե ստանդարտի նախագիծը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կողմից (ստանդարտացման ազգային մարմնի, ՏՀ-ի, պետական վերահսկողության մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների), ինչպես նաև ՄՏՀ անդամ պետությունների բոլոր լիազոր ներկայացուցիչների կողմից, ապա որոշում է ընդունվում այն քննարկման և համաձայնեցման ուղարկել համաձայնագրին մասնակից շահագրգիռ պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին (միջպետական ստանդարտացման ծրագրում նշված):

Եթե ստանդարտի նախագիծը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև ՄՏՀ անդամ այլ պետությունների լիազոր ներկայացուցիչների մեծամասնության կողմից (ձայների ավելի քան երկու երրորդը), ապա կարող է որոշում ընդունվել ստանդարտի նախագիծն ուղարկել քննարկման և համաձայնեցման համաձայնագրին մասնակից պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին կամ ստանդարտի նախագիծը քննարկել ՄՏՀ-ի աշխատանքային նիստում՝ տարածայնությունները հանելու նպատակով:

Ծանոթություն: ՄՏՀ-ի աշխատանքային նիստի որոշումը ձևակերպվում է արձանագրության մեջ:

Եթե ստանդարտի նախագիծը Հայաստանի Հանրապետության կողմից հավանության չի արժանացել և (կամ) եթե ստանդարտի նախագիծը հավանության չի արժանացել ՄՏՀ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների մեծամասնության կողմից, ապա ստանդարտի նախագիծը վերադարձնում են մշակողին լրամշակման մեկ ամիսը չգերազանցող ժամկետում: Հիմնավորված դեպքերում լրամշակման ժամկետը կարող է երկարացվել:

ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը լրամշակված ստանդարտի նախագիծը պարզաբանման հետ ուղարկում է կրկնական քննարկման ՄՏՀ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կազմակերպություններին:

ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը ամփոփում է լրամշակված ստանդարտի նախագծի քննարկման արդյունքները:

Ծանոթություն: Եթե ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ֆինանսավորվող ստանդարտի նախագծի կրկնական քննարկումից հետո ՄՏՀ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների մեծամասնությունը (կեսից ավելին) առարկուն է առաջարկվող ստանդարտի նախագծի ընդունմանը, ստանդարտացման ազգային մարմինը, ՄՏՀ-ի քարտուղարության

առաջարկությամբ, կարող է որոշում ընդունել այդ նախագծի (վերջին խմբագրության նախնական կամ լրամշակված տարբերակի) հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի նախագծի ձևակերպման մասին: Այդ որոշման մասին հայտնվում է ՄՏՀ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչներին և ստանդարտների բյուրոյին:

5.3.3 Համաձայնագրի անդամ պետությունների ստանդարտացման ազգային մարմինների քննարկմանը ստանդարտի նախագծի ուղարկման մասին

5.3.2 կետի համաձայն որոշում ընդունելու դեպքում, ՄՏՀ-ի քարտուղարությունը կամ մշակող կազմակերպությունը այն հանձնում է ստանդարտացման ազգային մարմնին հետևյալ փաստաթղթերի հետ միասին.

- պարզաբանում,
- ստանդարտի նախագծի քննարկման ՄՏՀ-ի միստի արձանագրություն (եթե այն անցկացվել է),

- Հայաստանի Հանրապետությունում և ՄՏՀ անդամ այլ պետությունների լիազոր ներկայացուցիչների կողմից ստանդարտի նախագծի համաձայնեցումը հաստատող փաստաթղթերի բնօրինակներ (եթե համաձայնեցվել է):

5.3.4 Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ստանդարտի նախագիծը, դրա վերաբերյալ ընդունում է որոշում և ուղարկում է ստանդարտի մշակմանը շահագրգիռ համաձայնագրին մասնակից պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին և ստանդարտների բյուրոյին:

Միաժամանակ ստանդարտի նախագիծն ուղարկվում է հրատարակչական խմբագրման ԳՕՍՍ 1.2 ստանդարտին համապատասխան:

5.3.5 Խմբագրական դիտողությունների առկայության դեպքում ստանդարտացման ազգային մարմինը դրանք փոխանցում է մշակողին ստանդարտի նախագծում հնգօրյա ժամկետում անհրաժեշտ ուղղումներ մտցնելու համար:

5.4 Ստանդարտի նախագծի ընդունումը, քվեարկության արդյունքների ամփոփումը և ստանդարտի նախագծի նախապատրաստումը զրանցման

5.4.1 Ստանդարտացման ազգային մարմինն ամփոփում է համաձայնագրին մասնակից պետություններում ստանդարտի նախագծի քննարկման արդյունքները, որոնք ստացվել են նրանց ստանդարտացման ազգային մարմիններից:

Եթե համաձայնագրին մասնակից պետությունների դիտողություններն ու առաջարկությունները սկզբունքային են, ստանդարտացման ազգային մարմինը ստանդարտը մշակողին է ուղարկում այդ դիտողությունների և առաջարկությունների պատճենը ստանդարտի նախագիծը լրամշակելու համար:

Եթե ստանդարտի նախագծի վերաբերյալ դիտողությունները սկզբունքային չեն և դրանց հաշվի առնելը չի պահանջում նախագծի էական լրամշակում, ապա ստանդարտի նախագծում անհրաժեշտ ուղղումները կարող է կատարել ստանդարտացման ազգային մարմինը (ստանդարտի նախագծի մշակողի համաձայնությամբ):

Ստանդարտը մշակողը մեկ ամսից ոչ ավելի ժամանակամիջոցում, ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի առնելով, լրամշակում է ստանդարտի նախագիծը, կազմում է համաձայնագրին մասնակից պետությունների կարծիքների ամփոփագիրը, լրացնում է ստանդարտի պարզաբանումը նրանց ընդհանրացված բնութագրերովս այդ փաստաթղթերը ներկայացնում է ստանդարտացման ազգային մարմին:

Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է լրամշակված ստանդարտի նախագիծը, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում է դրա

քննարկումը և պարզաբանման հետ ուղարկում է կրկնական քվեարկության՝ դիտողություններ ներկայացրած համաձայնագրին մասնակից պետությունների ազգային մարմիններին, ինչպես նաև ստանդարտների բյուրոյին:

5.4.2 Ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտների հրատարակչությունից «Թ ժնրԿՀ» («ՇԱՐՎԱԾՔԻ») դրոշմով ստանդարտի օրինակն ստանալուց հետո, ստանդարտների բյուրոյին է ուղարկում ընդունված ստանդարտի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը միջպետական խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան [2]:

5.4.3 Ստանդարտի նախագծի կրկնական քվեարկության բացասական արդյունքների դեպքում ստանդարտացման ազգային մարմինը ստանդարտների բյուրոյին է ուղարկում կրկնական քվեարկության քվեաթերթերի բնօրինակները, լրամշակված ստանդարտի նախագծի վերաբերյալ համաձայնագրին մասնակից պետություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների բնօրինակները, ինչպես նաև կարծիք է հայտնում ստանդարտի նախագծի հետագա լրամշակման նպատակահարմարության վերաբերյալ:

Եթե ստանդարտի նախագծի մշակումն ամբողջությամբ ֆինանսավորել է Հայաստանի Հանրապետությունը, ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ներկայացված պահանջների հիմնավորվածությունը և դրա հիման վրա որոշում է ընդունում ստանդարտի նախագծի հետագա լրամշակման կամ ստանդարտի նախագծի մշակման դադարեցման և որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ ընդունելու համար այն ձևավորման մասին: Ընդունված որոշման մասին հայտնվում է ստանդարտների բյուրոյին:

6 Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտների նախագծերի քննարկման կարգը, որոնց մշակողները համաձայնագրին մասնակից այլ պետություններ են կամ ՄՏՀ-եր, որոնց քարտուղարությունների վարումը դրված է այդ պետությունների վրա

6.1 Ստանդարտների բյուրոյից միջպետական ստանդարտացման ծրագիրն ստանալուց հետո ստանդարտացման ազգային մարմինը տեղադրում է ծրագիրն իր սայթի վրա և այդ մասին տեղեկացնում բոլոր ՏՀ-երին և պետական մարմիններին:

Եթե ստանդարտացման տվյալ օբյեկտի (գործունեության ոլորտի) համար ՏՀ չի ստեղծված, ապա պետական մարմինները որոշում են արտադրանքի, տեխնոլոգիայի տվյալ տեսակի համար մասնագիտացված և իրենց իրավասության սահմաններում առավել բարձր գիտատեխնիկական ներուժ ունեցող շահագրգիռ կազմակերպությունները և այդ մասին հայտնում են ստանդարտացման ազգային մարմինին:

6.2 Ստանդարտի նախագծի առաջին խմբագրությունն ստանալուց հետո ստանդարտացման ազգային մարմինը, ազգային տեղեկատվական տվյալների հետ ըստ ԳՕՍՏ 1.5, այն ուղարկում է շահագրգիռ կազմակերպություններին գնահատման և Հայաստանի Հանրապետությունում տվյալ ստանդարտի կիրառման նպատակահարմարությունը որոշելու համար:

6.3 Շահագրգիռ կազմակերպությունները քննարկում են այն, կազմում են ստանդարտի նախագծի վերաբերյալ կարծիքներ և ուղարկում են ստանդարտացման ազգային մարմին, նախագիծն ստանալուց հետո մեկ ամսից ոչ ուշ:

6.4 Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ստացված կարծիքները, որոշում է Հայաստանի Հանրապետությունում տվյալ ստանդարտի կիրառման նպատակահարմարությունը, ստուգում է դրա համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, դիտարկվող ստանդարտի հետ փոխկապակցված ազգային ստանդարտների պահանջներին, չափագիտական կանոններին և նորմերին,

կիրառվող տերմինաբանությանը, ստացված կարծիքների հիման վրա կազմում է ստանդարտի նախագծի վերաբերյալ եզրակացություն **ե** ուղարկում է այն մշակող պետության ստանդարտացման ազգային մարմնին:

6.5 Կարծիքների հիման վրա լրամշակված ստանդարտի նախագծի վերջին խմբագրությունն ստանալու հետո, ստանդարտացման ազգային մարմինը ստանդարտի նախագիծն ուղարկում է Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կազմակերպություններին կրկնական քննարկման:

6.6 Շահագրգիռ կազմակերպությունները, քննարկելով ստանդարտի վերջին խմբագրությունը, ստանդարտացման ազգային մարմնին հայտնում են ստանդարտի նախագիծն Հայաստանի Հանրապետության միանալու մասին իրենց կարծիքը:

6.7 Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ստանդարտի նախագծի վերջին խմբագրության վերաբերյալ շահագրգիռ կազմակերպությունների եզրակացությունները, որոշում է ընդունում ստանդարտին Հայաստանի Հանրապետության միանալու (չմիանալու) մասին **ե** քվեաթերթը ուղարկում է ստանդարտը մշակող պետության ստանդարտացման ազգային մարմնին:

6.8 Նշված ժամկետում շահագրգիռ կազմակերպությունից ստանդարտի նախագծի վերաբերյալ կարծիքի բացակայությունը դիտվում է որպես ստանդարտի նախագծի հետ համաձայնություն:

7 Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտների կիրառման կարգը

7.1 Ընդհանուր դրույթներ

7.1.1 Ընդունված միջպետական ստանդարտները, որոնց Հայաստանի Հանրապետությունը միացել է կամ դրանց մշակողն է, կիրառվում են նրա տարածքում առանց որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ վերածնակերպելու (բացառությամբ 7.3 ենթաբաժնում նշված դեպքերը): Ընդ որում, պետք է պահպանվի ՀԱՍ 1.0 ստանդարտով սահմանված դրանց կիրառման կարգը:

7.2 Ընդունված միջպետական ստանդարտների կիրառման կարգը Հայաստանի Հանրապետության տարածքում

7.2.1 Հրատարակված միջպետական ստանդարտը ստանալուց հետո, որին միացել է Հայաստանի Հանրապետությունը, ստանդարտացման ազգային մարմինը լրացնում է միջպետական ստանդարտը ՀԱՍ 1.5 ստանդարտով սահմանված ազգային տեղեկատվական տվյալներով, որոնք նպաստում են անմիջապես որպես ազգային ստանդարտ այն կիրառելուն:

7.2.2 Ստանդարտացման ազգային մարմինը հրաման է արձակում Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունված միջպետական ստանդարտի գործարկման **ե** դրան հակադրվող ազգային ստանդարտների չեղյալ հայտարարման մասին:

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի ընդունված միջպետական ստանդարտի գործարկման **ե** դրանց հակադրվող ազգային ստանդարտների չեղյալ հայտարարման մասին հրամանը

ստանդարտացման ազգային մարմինն արձակում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում պետական մարմնի առաջարկության հիման վրա:

7.2.3 Ընդունված միջպետական ստանդարտի գործի կազմումը ե ձևավորումը, ինչպես նաև ստանդարտի բնօրինակի (եթե ստանդարտը մշակվել է սույն ստանդարտի 5-րդ բաժնին համապատասխան) կամ ստանդարտի պատճենի (եթե այն մշակվել է սույն ստանդարտի 6-րդ բաժնին համապատասխան) հաշվառումը իրականացվում է ստանդարտացման ազգային մարմնի կողմից սահմանված հանձնարարականներին համապատասխան:

Քաղաքաշինության բնագավառի ընդունված միջպետական ստանդարտի գործի կազմումը ե վարումը իրականացվում է ստանդարտացման ազգային մարմնի ե քաղաքաշինության բնագավառում պետական մարմնի միջև կնքված համաձայնագրին համապատասխան:

7.2.4 Ընդունված միջպետական ստանդարտը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների համար սահմանված կարգով՝ ըստ ՀՍ 1.2 ստանդարտի:

7.2.5 Ընդունված միջպետական ստանդարտի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է «Ստանդարտներ ե տեխնիկական պայմաններ» տեղեկատուում:

7.2.6 Հայաստանի Հանրապետության տարածքում գործարկված միջպետական ստանդարտի բազմացումը ե դրա տարածումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների համար սահմանված կարգով [5]:

7.3 Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտները որպես միջպետական ստանդարտներ ընդունելու դեպքում դրանց կիրառման կարգը

7.3.1 Եթե որպես միջպետական ստանդարտ ընդունված է Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտը (դրա բովանդակության մեջ առանց որևէ փոփոխություն մտցնելու), ապա տվյալ ազգային ստանդարտը շարունակում է գործել Հայաստանի Հանրապետության տարածքում, այդ ստանդարտները կիրառելիս դրանց հավասարազորության ճանաչման մասին ստանդարտացման ազգային մարմնի հրամանի արձակումով հաշվի առնելով բովանդակության լրիվ բնագրաբնույթ լինելը:

Ընդ որում, «Ազգային տվյալներով տեղեկատվական թերթ»-ում նշվում է որպես ազգային ստանդարտ բնագրաբնույթ տեքստի առկայությունը հետևյալ օրինակով. «Կա բնագրաբնույթ տեքստ ըստ ՀՍ...»:

7.3.2 «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում համապատասխան տեղեկատվության հրապարակումից հետո տվյալ ազգային ստանդարտը կիրառող Հայաստանի Հանրապետության կազմակերպությունները ինքնուրույն լրացնում են դրա «Նախաբան» կառուցվածքային տարրը և նշագիրը:

Ընդ որում, «Նախաբանը» լրացվում է տեղեկատուում պաշտոնապես հրապարակված հետևյալ բովանդակության տեղեկությամբ.

ԸՆԴՈՒՆՎԵԼ է Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի կողմից _____ որպես

ընդունման թվականը

ԳՕՍՏ

միջպետական ստանդարտ:

Ստանդարտացման ազգային մարմնի հրաման հմ.

ընդունման թվականը

ԳՕՍՍ _____ գործողության մեջ է դրվել որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ նշված հրամանի արձակման պահից և Հայաստանի Հանրապետության տարածքում հավասարազոր է ՀՍՍ ստանդարտին կապված դրանց բովանդակության լրիվ բնագրաբնույթ լինելու հետ»:

Միջպետական ստանդարտի նշագրի լրացումը կատարում են ազգային ստանդարտի յուրաքանչյուր էջում: Ընդ որում, միջպետական ստանդարտի նշագիրը նշվում է Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի նշագրի ծախ մասում կամ վերևը՝ առանձնացնելով կոտորակի գծով.

Օրինակներ՝

1) ԳՕՍՍ/ՀՍՍ

2) ԳՕՍՍ
ՀՍՍ

Ստանդարտի նշագրի լրացումը կատարում են ձեռագիր՝ սև թանաքով, մածուկով կամ տուշով:

7.3.3 «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվում որպես միջպետական ստանդարտ ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի նշագիրը հրատարակում են տվյալ միջպետական ստանդարտի նշագրի տակ և տալիս են տողատակի ծանոթություն, որ Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառելիս ստանդարտները հավասարազոր են:

7.3.4 Կազմակերպությունն իրավունք ունի ինքնուրույն որոշելու նախկինում մշակված տեխնիկական փաստաթղթերում վկայակոչված՝ որպես միջպետական ստանդարտ ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի նշագրում ուղղումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Գործող նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի վերանայման դեպքում, որոնցում վկայակոչված է այդ ստանդարտը, ինչպես նաև նոր մշակվող փաստաթղթերում «Նորմատիվ վկայակոչումներ» կառուցվածքային տարրում նշում են ստանդարտի երկու նշագրերը, ինչպես նշված է 7.3.2 (օրինակ 2):

7.3.5 Միջպետական ստանդարտում փոփոխություն մտցնելուց հետո ստանդարտացման ազգային մարմինն այն գործողության մեջ է դնում Հայաստանի Հանրապետության տարածքում և միաժամանակ ընդունում և գործողության մեջ է դրվում բնագրաբնույթ բովանդակությամբ տվյալ միջպետական ստանդարտին հավասարազոր Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի փոփոխությունը:

Ծանոթություն: Փոփոխության նախագծի մշակումն իրականացվում է 8.2 ենթաբաժնի պահանջներին համապատասխան:

7.3.6 Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտն ընդունված է որպես միջպետական ստանդարտ դրա բովանդակության վերանայումով կամ փոփոխությունով, ստանդարտացման ազգային մարմինն, անհրաժեշտության դեպքում, կարող է որոշումն ընդունել այդ

ազգային ստանդարտի գործողության պահպանման մասին՝ սահմանափակելով դրա կիրառման ոլորտը նախկինում մշակված արտադրանքով կամ նախկինում արտադրված արտադրատեսակի նորոգմամբ և պահեստամասերի պատրաստմամբ: Այդ դեպքում ստանդարտում կատարվում է համապատասխան փոփոխություն, որը գործարկվում է ստանդարտացման ազգային մարմնի հրամանով և հրապարակվում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում:

Տվյալ ստանդարտի վկայակոչումները թույլատրվում է պահպանել միայն այն արտադրանքի նախկինում մշակված նորմատիվ փաստաթղթում, որի թողարկումը յուրացվել է մինչև Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար համապատասխան միջպետական ստանդարտի գործարկումը:

8 Միջպետական ստանդարտների փոփոխությունների նախագծերի մշակման և ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց կիրառման կարգը

8.1 Ընդհանուր դրույթներ

8.1.1 Միջպետական ստանդարտի փոփոխությունը (այսուհետե՛ս՝ ստանդարտի փոփոխություն) մշակվում են դրա առանձին պահանջների փոխարինման, լրացման կամ բացառման դեպքում, որոնք չեն հանգեցնի նոր արտադրանքի և ըստ գործող ստանդարտի թողարկվող արտադրանքի համափոխարինելիության և համատեղելիության խախտման:

8.1.2 Միայն խմբագրական բնույթի և վկայակոչումներում կատարվող ստանդարտի փոփոխությունը առանձին փաստաթղթի ձևով չեն մշակում, այլ ներառում են ստանդարտի բովանդակային պահանջների փոխարինմամբ, լրացմամբ, բացառմամբ պայմանավորված հերթական փոփոխության մեջ:

Փոփոխության կառուցումը և շարադրումը՝ ըստ ՀՕՍՍ 1.5:

8.2 ՄՏՀ-ի կողմից, որի քարտուղարության վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա, մշակված կամ ՄՏՀ-ի շրջանակներից դուրս մշակված ստանդարտի փոփոխության մշակումը

8.2.1 Ստանդարտների փոփոխությունը մշակում են այն կազմակերպությունները, որոնք տվյալ ստանդարտների մշակողն են:

8.2.2 Ստանդարտի փոփոխությունը մշակվում է հաշվի առնելով ՄՏՀ-ի քարտուղարությունից, Հայաստանի Հանրապետության ՏՀ-երից, պետական մարմիններից (այդ թվում պետական վերահսկողության մարմիններից), ինչպես նաև համաձայնագրին մասնակից պետությունների ստանդարտացման ազգային մարմիններից կամ ՄՏՀ-ում դրանց լիազոր ներկայացուցիչներից ստացված առաջարկությունները:

8.2.3 Ստանդարտի փոփոխությունը մշակում են սույն ստանդարտի 5-րդ բաժնում ստանդարտի նախագծի համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները:

8.2.4 Եթե համաձայնագրին մասնակից պետությունների մեծամասնությունը չի ընդունում Հայաստանի Հանրապետության նախաձեռնությամբ մշակված ստանդարտի փոփոխությունը, ապա ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ընդունելուց հրաժարվելու պատճառները, պարզում է դրանց հիմնավորվածությունը և որոշում է ընդունում փոփոխության նախագծի հետագա լրամշակման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ստանդարտի կիրառման միակողմ դադարեցման և ստանդարտի հիման վրա ազգային ստանդարտի ձևակերպման մասին՝ դրա մեջ մտցնելով առաջարկվող փոփոխությունը:

8.3 Ստանդարտի փոփոխության նախագծի քննարկումը, որի մշակողը

համաձայնագրին մասնակից պետություն է կամ ՄՏՀ, որի քարտուղարության վարումը դրված է այդ պետության վրա

8.3.1 Ստանդարտացման ազգային մարմինը 6.1-6.3 կետերին համապատասխան կազմակերպում է ստանդարտի փոփոխության նախագծի քննարկումը՝ ներգրավելով նախկինում այդ ստանդարտի նախագիծը քննարկված կազմակերպությանը:

8.3.2 Կազմակերպությունը քննարկում է փոփոխության նախագիծը ստանդարտի նախագծի քննարկման համար սահմանված կարգով և ժամկետներով (6.3-6.6):

8.3.3 Կազմակերպությունից կարծիքներն ստանալուց հետո ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է փոփոխության նախագծի եզրակացությունը, որոշում է ընդունում փոփոխության նախագծի վերաբերյալ և այն ուղարկում է մշակող պետության ստանդարտացման ազգային մարմին և ստանդարտների բյուրոյին:

Եթե առաջարկվող փոփոխությունը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ դրա կիրառումը նպատակահարմար չէ Հայաստանի Հանրապետությունում, ստանդարտացման ազգային մարմինը պատրաստում է նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ և դրանք ուղարկում է մշակող պետության ստանդարտացման ազգային մարմնին և ստանդարտների բյուրոյին:

8.3.4 Ստանդարտի փոփոխության լրամշակված նախագծի քննարկումն իրականացվում է 6.5-6.8 կետերին համապատասխան:

8.3.5 Եթե ստանդարտի փոփոխությունն ընդունվել է առանց Հայաստանի Հանրապետության համաձայնության, և եթե այդ փոփոխությունը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, չափագիտական կանոններին և նորմերին, ստանդարտացման ազգային մարմինը որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքում տվյալ ստանդարտի կիրառման միակողմ դադարեցման, այդ ստանդարտի հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի ձևավորման և համապատասխան հրամանով ընդունման մասին, ինչպես նաև այդ մասին ծանուցում է ստանդարտների բյուրոյին և տվյալ միջպետական ստանդարտը կիրառող պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին:

8.4 Ընդունումից հետո Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար ստանդարտի փոփոխությունը գործողության մեջ դնելը

8.4.1 Հայաստանի Հանրապետության կողմից մշակված կամ ընդունված փոփոխությունն ստանալուց հետո ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտների համար ընդունված կարգով, սահմանում է դրա գործարկման թվականը և գործողության մեջ է դնում:

Քաղաքաշինության բնագավառի ստանդարտի փոփոխության կիրառման կարգը՝ 7.2.2 կետին համապատասխան:

8.4.2 Ստանդարտի փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը և փոփոխության տեքստը հրապարակվում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում:

9 Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտների գործողության դադարեցման կարգը

9.1 Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝ կապված միջպետական խորհրդի կողմից այն չեղյալ հայտարարելու կամ ստանդարտացման ազգային մարմնի կողմից միակողմ որոշում ընդունելու հետ.

- Հայաստանի Հանրապետության տարածքում ըստ տվյալ ստանդարտի արտադրանքի թողարկման կամ աշխատանքի կատարման, ծառայության մատուցման դադարեցում,

- տվյալ ստանդարտի փոխարեն ստանդարտացման այլ նորմատիվ փաստաթղթի մշակում, որը նախատեսված է ՀՍ 1.0 ստանդարտին համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառելու համար,

- տվյալ ստանդարտի հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի ձևավորում (տես 7.3.6),

- այլ հիմնավորված դեպքերում:

9.2 Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտի չեղյալ հայտարարման (գործողության դադարեցման) մասին առաջարկությունները կազմակերպություններն ուղարկում են ստանդարտացման ազգային մարմնին:

9.3 Ստանդարտացման ազգային մարմինը վերլուծում է ստանդարտի չեղյալ հայտարարման վերաբերյալ առաջարկությունները, համաձայնեցնում է այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ամփոփում է դրանք, գնահատում է այդ առաջարկությունների իրագործման նպատակահարմարությունը և ընդունում համապատասխան որոշում:

9.4 Ստանդարտի չեղյալ հայտարարման վերաբերյալ առաջարկությունները ստանդարտացման ազգային մարմինն ուղարկում է ստանդարտների բյուրոյին և տվյալ ստանդարտն ընդունած կամ դրան միացած համաձայնագրին մասնակից պետություններին:

Եթե ստանդարտի չեղյալ հայտարարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առաջարկությունը հավանության չի արժանացել տվյալ ստանդարտը կիրառող այլ պետությունների կողմից, ստանդարտացման ազգային մարմինը որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքում դրա գործողության միակողմ դադարեցման մասին:

9.5 Եթե ստանդարտի չեղյալ հայտարարման վերաբերյալ առաջարկությունը ստանդարտացման ազգային մարմին է եկել այլ պետությունից կամ ՄՏՀ-ից, որի քարտուղարության վարումը դրված է այլ պետության վրա, ապա ստանդարտացման ազգային մարմինը կազմակերպում է այդ առաջարկության քննարկումը Հայաստանի Հանրապետությունում: Ընդ որում ստանդարտացման ազգային մարմինը առաջարկությունն ուղարկում է շահագրգիռ կազմակերպություններին քննարկման, նրանցից պատասխան ստանալու հետո ամփոփում է կարծիքները և քննարկման արդյունքների հիման վրա լրացնում է քվեաթերթը:

9.6 Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտի գործողության դադարեցման մասին որոշումն ընդունված է միակողմանի, ստանդարտացման ազգային մարմինն այդ մասին ծանուցում է ստանդարտների բյուրոյին և տվյալ ստանդարտը կիրառող համաձայնագրին մասնակից պետությունների ստանդարտացման ազգային մարմիններին:

Հայաստանի Հանրապետության տարածքում միջպետական ստանդարտի գործողության դադարեցման մասին ստանդարտացման ազգային մարմնի որոշումը՝ կապված դրա չեղյալ հայտարարման հետ, ձևակերպվում է ստանդարտացման ազգային մարմնի համապատասխան հրամանով:

9.7 Միջպետական ստանդարտի չեղյալ հայտարարման մասին տեղեկատվությունը կամ դրա փոխարեն այլ միջպետական ստանդարտի կամ ազգային ստանդարտի ընդունման մասին տեղեկատվությունը գործողության դադարեցման թվականի նշումով, հրապարակվում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում:

Տեղեկատուում միջպետական ստանդարտի չեղյալ հայտարարման մասին տեղեկատվության հրապարակումը ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերում և այլ փաստաթղթերում դրա վկայակոչման դադարեցման պաշտոնական հիմք է:

9.8 Եթե միջպետական ստանդարտը չեղյալ է հայտարարվել առանց Հայաստանի Հանրապետության համաձայնության, ստանդարտացման ազգային մարմինը որոշում է ընդունում այդ ստանդարտը որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ վերաձևակերպելու մասին:

Այդ դեպքում տվյալ ազգային ստանդարտի ընդունման մասին ազգային մարմնի հրամանում թույլտվություն է տրվում Հայաստանի Հանրապետությունում չեղյալ հայտարարված միջպետական ստանդարտի կիրառման մասին ստանդարտի «Նախաբան» կառուցվածքային տարրում համապատասխան լրացում կատարելուց և նշագիրը վերաձևակերպելուց հետո:

Ընդ որում, «Նախաբան»-ը լրացվում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում պաշտոնապես հրապարակված հետևյալ բովանդակության տվյալներով.

«ԶԵՂՅԱԼ Է ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի կողմից

չեղյալ հայտարարման թվականը

ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ստանդարտացման ազգային մարմնի _____ հրամանով որպես
ընդունման թվականը, հրամանի համարը

Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ ՀՍ

_____ գործարկման թվականով»:

Ստանդարտի նշագրի վերաձևակերպումը կատարվում է ձեռագիր սև թանաքով, մածուկով կամ տուշով: Ընդ որում, չեղյալ հայտարարված ստանդարտի նշագրի վրա գիծ է քաշվում, իսկ դրա վերևում կամ ձախ մասում տրվում է Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտի նշագիրը:

Հավելված Ա
(տեղեկատու)

Մատենագիտություն

- [1] ՊԱԳ 02-93 Ստանդարտացման միջպետական տեխնիկական հանձնաժողովի տիպային դրույթներ
- [2] ՊԱԳ 03-93 Ստանդարտացման միջպետական նորմատիվ փաստաթղթերի գրանցման և հրատարակմանը նախապատրաստման կարգ
- [3] ՄՊԳ 22-97 Միջպետական ստանդարտների մշակման ծրագրային պլանավորման կանոններ
- [4] ՄՍՆ 1.01-01-96 Շինարարությունում միջպետական նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ
- [5] «Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծման և տեղեկատվության ապահովման կարգի հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ.-ի հոկտեմբերի 14-ի N 648 որոշում